

4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

4.1. Վճարային հաշվեկշիռը 2011 թվականին

Վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության արտաքին գործառնությունները 2011 թվականին հիմնականում կապված են եղել արտաքին առևտրի հետ: Կապիտալի ներհոսքը գլխավորապես կատարվել է պաշտոնական գրանտների, միջպետական վարկի միջոցով և միջազգային կազմակերպություններից ստացված ֆինանսական օգնության հաշվին^{*}: Ըստ նախնական տվյալների, 2011 թվականին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը կազմել է 59927.5 մլն դրամ, որը 2010թ. նկատմամբ աճել է 28.1 տոկոսով:

Ապրանքների գծով պակասուրդը 2011 թվականին կազմել է 82555.8 մլն դրամ կամ 2010թ. նկատմամբ աճել է 16.3 տոկոսով:

Ծառայությունների բնագավառում, ստացված տվյալների ամփոփման արդյունքներով, 2011 թվականին բացասական հաշվեկշիռը կազմել է 7796.9 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, 2011 թվականին ապրանքների և ծառայությունների գծով պակասուրդը կազմել է 90352.7 մլն դրամ, եկամուտների գծով հաշվեկշիռը կազմել է 2550.0 մլն դրամ, իսկ ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվությունների) սալդոն՝ 32975.2 մլն դրամ:

Կապիտալի հաշվի հոդվածների սալդոն կազմել է 8935.3 մլն դրամ և 2010թ. նկատմամբ աճել է 50.6 տոկոսով:

2011 թվականին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հոդվածները ունեցել են հետևյալ պատկերը՝

- ուղղակի ներդրումները տնտեսության մեջ՝ 5698.0 մլն դրամ,
- պորտֆելային ներդրումների պասիվային մասը՝ -440.6 մլն դրամ,
- այլ ներդրումների ակտիվային մասը՝ -92005.4 մլն դրամ,
- այլ ներդրումների պարտավորությունները՝ 137409.0 մլն դրամ:

Վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումից պարզ երևում է, որ մեր տնտեսությունը կախվածության մեջ է արտաքին աշխարհից:

ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը 2010-2011թթ.

	2010թ.	2011թ.	Բացարձակ փոփոխությունը /մլն դրամ/
Ա.Ընթացիկ հաշիվ, առանց Ե խմբի	-46782.3	-59927.5	-13145.2
Ապրանքներ, կրեդիտ	27830.7	29621.7	1791.0
Արտահանում f.o.b.	27830.7	29621.7	1791.0
Այլը	0.0	0.0	0.0
Ապրանքներ, դեբետ	-98808.9	-112177.5	-13368.6
Ներմուծում f.o.b.	-98808.9	-112177.5	-13368.6
Այլը	0.0	0.0	0.0
Հաշվեկշիռ ապրանքների գծով	-70978.1	-82555.8	-11577.7
Ծառայություններ, կրեդիտ	6795.9	3762.8	-3033.1
Տրանսպորտային	269.6	260.4	-9.2
Այլը	6526.3	3502.4	-3023.9
Ծառայություններ, դեբետ	-10052.4	-11559.7	-1507.3
Տրանսպորտային	-4325.5	-4879.9	-554.4
Այլը	-5726.9	-6679.8	-952.9
Հաշվեկշիռ ծառայությունների գծով	-3256.5	-7796.9	-4540.4
Հաշվեկշիռ ապրանքների և ծառայությունների գծով	-74234.6	-90352.7	-16118.1
Եկամուտներ, կրեդիտ	1177.0	706.5	-470.5
Եկամուտներ, դեբետ	-1802.7	-3256.5	-1453.8
Հաշվեկշիռ եկամուտների գծով	-625.7	-2550.0	-1924.3
Հաշվեկշիռ ապրանքների, ծառայությունների և եկամուտների գծով	-74860.3	-92902.7	-18042.4
Ընթացիկ տրանսֆերտներ, կրեդիտ	28264.1	33171.4	4907.3
Ընթացիկ տրանսֆերտներ, դեբետ	-186.1	-196.2	-10.1
Հաշվեկշիռ ընթացիկ տրանսֆերտների գծով	28078.0	32975.2	4897.2

^{*} Կապիտալի արտահոսքը վճարային հաշվեկշռում չի արտացոլված՝ այդ տվյալների հավաքագրման համակարգում մի շարք խնդիրների առկայության պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

	2010թ.	2011թ.	Բացարձակ փոփոխությունը
Բ. Կապիտալի հաշիվ, առանց Ե խմբի	5931.5	8935.3	3003.8
Կապիտալի հաշիվ, կրեդիտ	5931.5	8935.3	3003.8
Կապիտալի հաշիվ, դեբետ	0.0	0.0	0.0
Ընդամենը Ա խումբ գումարած Բ	-40850.8	-50992.2	-10141.4
Գ. Ֆինանսական հաշիվ, առանց Ե խմբի	39337.6	50661.0	11323.4
Ուղղակի ներդրումներ այլ երկրներ	0.0	0.0	0.0
Ուղղակի ներդրումներ այլ երկրներից	6751.7	5698.0	-1053.7
Պորտֆելային ներդրումներից ակտիվներ	0.0	0.0	0.0
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներից պարտավորություններ	917.0	-440.6	-1357.6
Արժեթղթերում մասնակցում	923.1	-656.2	-1579.3
Պարտային արժեթուղթ	-6.1	215.6	221.7
Ակտիվներ այլ ներդրումներից	-60715.6	-92005.4	-31289.8
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	-52506.0	-59493.3	-6987.3
Բանկեր	-2923.9	2003.2	4927.1
Այլ հատվածներ	-5285.7	-34515.3	-29229.6
Պարտավորություններ այլ ներդրումներից	92384.5	137409.0	45024.5
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	51779.5	44458.8	-7320.7
Բանկեր	704.2	1829.8	1125.6
Այլ հատվածներ	39900.8	91120.4	51219.6
Ընդամենը, խումբ Ա-ից Գ	-1513.2	-331.2	1182.0
Դ. Սխալներ և բացթողումներ մաքուր	1513.2	331.2	-1182.0
Ընդամենը, խումբ Ա-ից Դ (ընդհանուր հաշվեկշիռ)	0.0	0.0	0.0
Ե. Ֆինանսական հոդվածներ	0.0	0.0	0.0
Ռեզերվային ակտիվներ	0.0	0.0	0.0
Հիմնադրամի վարկի և Հիմնադրամից փոխառությունների օգտագործում	0.0	0.0	0.0
Բացառիկ ֆինանսավորում	0.0	0.0	0.0
Արտասահմանյան ռեզերվներ (իրավունքներ) հանդիսացող պարտավորություններ	0.0	0.0	0.0